

ԻՐԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ 24ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉԻՆ ՆՇՈՒՄ

Իրանի իսլամական լեղափոխություն 24րդ տարեդարձին առիթով, երէկ երեկոյեան Հարավային Արուարձաններուն մէջ Հրապարակի կայմակերպութեամբ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը:

Ներկայ գտնուեցան քաղաքական, կառավարական, խորհրդարանական, դիւանագիտական, կուսակցական բազմաթիւ պատասխանատուներ եւ անձնավորութիւններ: Ներկայ եղաւ նաեւ Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը:

Հանդիսութեան իսօք առին Հրապարակի ընդհանուր քարտուղար Չէյի Հասան Նասրաւիա եւ Իրանի դեսպան Մահմուտ Խորիսի:

Չէյի Նասրաւիա կոչ ուղղեց իրանացիներուն՝ պատասխանելու եւ յետաձգելու իրանական ներքին հարցերը, որովհետեւ Իրաքի դէմ ամերիկեան սպառնալիքները ուղղուած են բոլոր արաբներուն դէմ:

ՓԵՐԸՆ Կ'ԸՆԴԳԾԵ ԼԻԲԱՆԱՆ - Ե. ՄԻՈՒԹԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՆԸ

Եւրոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու յանձնակատար Քրիս ֆլեթչընը Երբեք եւ արտաքին լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտի, տնտեսութեան եւ առևտուրի նախարար Պասէլ Ֆլէյճանի անոր կ'ընկերակցէր Լիբանանի մէջ Ե. Միութեան դեսպան Փաթրիք Ռեանո:

Փլեթչըն իր այցելութիւններուն ընթացքին քննարկեց շրջանային հարցերը, յատկապէս Իրաքի եւ Պաղեստինի տագնապները:

Փլեթչըն ընդգծեց, որ Լիբանան - Ե. Միութիւն տնտեսական գործակցութիւնը արտաճուած էր Ե. Միութիւնը կ'ուզէ տեսնել Լիբանանի կողմէ յաւելնել արտաճումը դէպքի եւրոպա, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ եւրոպական յաւելնել ներդրումները: Ան յոյս յայտարարեց, որ Լիբանանեան կառավարութեան որդեգրած միջոցառումները կ'արեւան տնտեսութիւնը ամբողջովին փոխէ:

Փլեթչըն հաւատեց, որ բոլորը կ'ուզեն Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնը տեսնել այն դերին մէջ, ուր ան զէնքի քննիչներուն թոյլ կու տայ Իրաքը ապազինելու հաւանական քանդուածի զէնքերէն:

Անդրադառնալով պաղեստինեան տագնապին եւ իսրայէլեան բռնարարներուն՝ Փլեթչըն ըսաւ, որ «պէտք է մեր ուշադրութիւնը շեղենք պաղեստինեան տագնապէն»: Փլեթչըն աւելցուց, որ միջազգային հանրութիւնը կը փափաքէ գետնի վրայ պաղեստինեան պետութեան մը կերտումը՝ ապահովելով շրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն:

ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Այսօր՝ Չաբթ, 8 Փետրուար 2003ին, կէսօրեան ժամը 12:00ին ունկնդրեցէր Ե. Յ. Գ. Լիբանանի Հայ Դատի Մարմինը «ՎԱՅ ԴԱՏԱ ԱՅՍՕՐ» յայտագիրը

- Չաբթուան մտածումը
- Լուրեր Հայ Դատի մասին
- Պատմական ակնարկ՝ անցեալէն՝ այսօր
- Հարցազրոյց ARMENIA. THE BETRAYED ֆիլմի բեմադրիչ՝ Ճէյմս Միլըրի հետ:

Յայտագիրին կրկնութիւնը՝ Կիրակի, 9 Փետրուար 2003ին, կէսօրեան ժամը 12:00ին:

ՔԱՍՈՒԼԻՏԵՍ - ՀԱՄԱՌՈՒՑ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիպրոսի արտաքին գործոց նախարար Իաննիս Գասուլիտէս երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիէ Պրոքիի եւ իրանացի իր պաշտօնակիցին՝ Մահմուտ Համմուտի, որոնց հետ քննարկեց շրջանային գարգացումները, յատկապէս Իրաքի տագնապը եւ անոր դէմ պատերազմի հաւանականութիւնը:

Գասուլիտէս շեշտեց, որ Կիպրոս կը գորակցի Արաբական Լիգայի որդեգրած կեցողութեանը՝ որովհետեւ Կիպրոսը կը մնայ գերազանց պատասխանատու համախաբար խաղաղութեան եւ կայունութեան եւ աւելցուց, որ

Կիպրոս կը գորակցի ՄԱԿի թիւ 1441 բանաձեւին գործադրութեան:

Իր կարգին, Համմուտ յայտնեց, որ հարկ է ենթարկուիլ միջազգային օրինականութեան՝ եւ հասնելու այնպիսի լուծումներու, որոնք կ'ապահովեն արաբական շահերը եւ պաղեստինցի ու իրաքի ժողովուրդներուն իրաւունքները: Համմուտ շեշտեց, որ արաբական շահերը ի գործ կը դրուին շրջանը համախաբար խաղաղութեան եւ կայունութեան եւ աւելցուց, որ

Կիպրոս կը գորակցի ՄԱԿի թիւ 1441 բանաձեւին գործադրութեան:

Իր կարգին, Համմուտ յայտնեց, որ հարկ է ենթարկուիլ միջազգային օրինականութեան՝ եւ հասնելու այնպիսի լուծումներու, որոնք կ'ապահովեն արաբական շահերը եւ պաղեստինցի ու իրաքի ժողովուրդներուն իրաւունքները: Համմուտ շեշտեց, որ արաբական շահերը ի գործ կը դրուին շրջանը համախաբար խաղաղութեան եւ կայունութեան եւ աւելցուց, որ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ ՄԱՍՆԱԾԻՒՂ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

●Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 11 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան Ե. Ս. Ս.» մարզամշակութային կեդրոնին մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՂՈՎ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան կազմակերպութեամբ «Քուստուր» պանդոկին մէջ երէկ բացուած կատարուեցաւ կառավարութեան ընկերային պարտաւորութիւններուն մասին խորհրդաժողով:

Ղովի մը, որ իր աշխատանքները պիտի աւարտէ այսօր երեկոյեան: Խորհրդաժողովին «Փան ժողով» հաստատութեան անունով խօսք առաւ Պեռնար Սոլաժ, որ յայտնեց, թէ Իրաքի մէջ զէնքի քննիչներուն աշխատանքները անհրաժեշտութիւն են՝ նկատել տալով, որ Գերմանիա եւ Ֆրանսա կ'ուզեն շեշտել զինուորական ընտրանքը լուծում չէ, այլ հարկ է իրաքեան տագնապին խաղաղ լուծում ապահովել ՄԱԿի միջոցով:

Նաջման քաղաքականութիւնը՝ նշելով, որ պետական մարզին պահպանումը եւ բարեկարգումը կը մնան մեծագոյն մարտահրաւէրները:

Ժամակաթ կոչ ուղղեց նաեւ կրօնքը անջատելու քաղաքականութեան շեշտելով, որ խորհրդաժողովին նպատակն է լուսարձակի տակ բերել պետութեան ընկերային դերակատարութեան անհրաժեշտութիւնը, որովհետեւ պետութիւնն է, որ կը պաշտպանէ քաղաքացիները եւ կ'ապահովէ անոր աշխատանքը, առողջապահութիւնն ու զիտութիւնը:

ՏԵԱՌԵՆԴԱՌԱՍՉՔ ՍՐԲ. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՉ

Յառաջիկայ Հինգշաբթի, 13 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 4:00ին Նոր Մարաշի Սրբ. Զատնից Մանկանց Եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ ՏԵԱՌԵՆԴԱՌԱՍՉԻ նախատօնակի արարողութիւն:

Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզ՝ **ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի

Յետ եկեղեցական արարողութեան եկեղեցոյ շրջափակին մէջ պիտի վառի աւանդական խարոյկը: Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու աւանդական հոգեթով արարողութեան:

ՍՐԲ. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՔԱՍՏԱՌՈՐՈՒԹՅՈՒՆ

Տըր եւ տիկին Սաունա Սարգիսեան բախտաւորուած են առջինէկ առջիկ զաւակով մը

ԱՐՓԻ

22 Յունուար 2003 Դամասկոս

ՏԵԱՌԵՆԴԱՌԱՍՉՔ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՉ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2003ին, երեկոյեան ժամը 4:00ին, Ս. Նշան Մայր Եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ ՏԵԱՌԵՆԴԱՌԱՍՉԻ նախատօնակի հանդիսաւոր արարողութիւն:

Ժամերգութեան ետք, եկեղեցոյ շրջափակին մէջ պիտի վառի աւանդական խարոյկը: Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ ըլլալու եւ հաղորդուելու օրուան Ս. Խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

ՎԱՅ ԿԱԹ. ՄԵՆՐՈՊԵԱՆ ԲԱՐՉՐ. ՎԱՐՃԱՐԱՆ ԾԱՇԿԵՐՈՅՈՅ LE BRISTOL 29 ՄԱՐՏ 2003

ԺԱՊԱԲԵՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՅՈՒՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՏԱԾ ԱՆՆԱԽԵՆԹԱՅ ՅԱՃՈՂՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ Հ.Յ.Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ՝

ARMENIA: THE BETRAYED

(BBC2 ԿԱՅԱՆԻՆ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՎԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՎԱԲԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԺԱՊԱԲԵՆԸ)

Հեղինակ՝ **ՖԵՐԿԵԼ ՔԻՆ**
Բեմադրիչ՝ **ՃԵՅՄՍ ՄԻԼԸՐ**

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 10 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Ս.Ս.» մարզամշակութային համալիրին մէջ:

ԶՆՈՐԵԱԿԱԼԻԵ

Տիար Վահրամ Նահիկեան, տեր եւ տիկին Նշան Նահիկեան եւ զաւակուծը, տեր եւ տիկին Երուանդ Նահիկեան եւ զաւակուծը, տեր եւ տիկին Ճոն եւ Վերա Ներսիսեան եւ զաւակուծը, շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպրտակով, նուիրատուութեամբ, հեռաձայնով եւ եւնամակով մասնակից եղան իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ԾԱԲԵ ՆԱՇԻԿԵԱՆԻ (ծնեալ Սիմօսեան) մահուան սուգին:

ԿՈՒՉՈՒԻՆ

●FRIGO SERVICES հաստատութիւնը կարիքը ունի փորձառու թերմիսիէն երբեմնի զետեղողներու եւ նորոգողներու: Դիմել՝ հեռ. 01-259923 եւ 03-344256:

ՎԱՐՉՈՒ ԶԱՐԿԱԲԱԺԻՆ

●Սրգեթի շրջան, «Կարին 1», 3 ննջասենեակ, հիւրասենեակ, ձալասենեակ, 3 բաղնիք, գեղատեսիլ վայր: Ընդ. 03-838120:

ՆՇԱՐ ԶՕՐ. ՔԵՆԱՆ ՏԵՆԻՉԻՈՒԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ Զ'ԱՆՑՆԻՐ ՀԱՐԼԱԹԱՄՈՒԹԵՆԸ ԱՆԴԻՆ

Պաքուի մէջ, Արաբիանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիեի հետ տեսակցութեան մը ընթացքին, Թուրքիոյ ապառիտ ապահովութեան ակադեմիայի տնօրէն ԿՕՐ. ՔԵՆԱՆ ՏԵՆԻԿԻՈՒ ԵՐԱՐԱՐԵԳ, թէ անհրաժեշտութեան պարագային թուրքերը եւ ապերիները ուս - ուսի պիտի կրուին հայերուն դէմ:

«Ուշ եւ պինուոր» պիտի ըսէ հայը ի լուր այս յայտարարութեան, որ խորքին մէջ չ'անցնիր թուրքին բնորոշ շարլաթանութեան սահմանը: Այո՛, ուշ է, որովհետեւ «բանը բանէն շատոնց անցեր է»: Արաբիան գոյամարտի տարիներուն մենք տեսանք արդիւնքը պատերազմի դաշտին վրայ: Ըստ երեւոյթի պարպապէս այրած արտի միջիարարան է թուրք պորպարին յայտարարութիւնը, որովհետեւ ինք եւս քաջ գիտէ, որ ուս - ուսի թէ գիրկ - գիրկի միեւնոյնն է, թուրքն ու ապերին ոչ ինչ կրնան ընել այսուհետեւ հայ պինուորին կամ ապատամարտիկին դիմաց, պարպապէս որովհետեւ հայը իր սեփական հողը, իր իրաւունքն է որ կը պաշտպանէ, մինչ թուրքն ու ապերին պարթողն են, բռնագրաւողը: Չօրավար լաւ գիտնալու է, ի վերջոյ իր մասնագիտութիւնն է, որ պատերազմը, վերջնական պատերազմը կը յաղթէ իրաւատէրը, որովհետեւ կը մարտնչի յանուն ապերին ու հայրենիքին, անոր հարուածը կ'ըլլայ հատու եւ անվերջ: Մինչդէռ նոյնը չէ պարագան հրոսակին, որ ստիպուած է իր կեանքը ամէն գնով փրկելու մտահոգութեան մղուած գերագուշ ըլլալ, մահէն վախնալ, որովհետեւ լաւ գիտէ, թէ իր նորոգեալ ասպատակութիւնը աննպատակ է ու անարդար:

Աւելին՝ Օրին, մենք՝ հայերս, Լեռնային Ղարաբաղի տարածքին կը մարտնչէինք ոչ այդքան կայմակերպուած, ոչ այդքան լաւ պինուած, մինչդէռ ապերին, նոյն թուրքին ու վարձկան բազմաթիւ ուժերու օժանդակութեամբ, լաւապէս պինուած կը պատերազմէր հայուն դէմ: Հակառակ ասոր սակայն, մենք մարտի դաշտ նետուած էինք ոչ միայն հաւասարէ - հաւասարի տրամադրութեամբ, այլեւ ի սկզբանէ յաղթականի համոզումով, եւ փաստօրէն յաղթեցինք ու մեր պապենական հողերէն դուրս շարժեցինք ուս - ուսի տուած թուրք - ապերի թշնամին:

Այսօր նոյնը չէ պարագան: Այսօր հայը ունի շատ աւելի լաւ կայմակերպուած ու մարտունակ բանակ, պետականութիւն, անկոտորում կամք եւ յաղթող կողմի գերապանց կրող: Աւելին՝ Այսօր Լեռնային Ղարաբաղը իր կողքին ունի Հայաստանը ամբողջ իր բանակով ու պետականութեամբ:

Երէկ յաղթեցինք, վաղը եւս կը յաղթենք՝ ուս - ուսի եկեր էք, թէ գիրկ - գիրկի, պարո՛ւս պորավար:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՅԻՇԱՍԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԵՐՉԱՆԿԱՅԻՇԱՍԱԿ Տ. Տ. ՉԱՐԵՀ Ա. ՓԱՅՍՍԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ 40ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

Շոկաւորութեամբ՝

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կը բանախօսեն՝

ԳԵՐՇ. Տ. ՉԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ՏԻԱՐ ԳԵՆՐԳ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ԳՊԵՐՎԱՆՔԻ ՍԱՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԸ

Տեղի պիտի ունենայ Գործըջաբթի, 12 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 7:30ին վեհարանի դահլիճին մէջ, կաթողիկոսարան, Անթիլիաս:



ԿԻԼԻԿԵԱՆ ԹԵՄԵՐՈՒ ԿԻԹԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՁ

Հայ դպրոցին վերականգնված ու անոր հզորացմանը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար եղած է իր առաքելութեան կարեւոր բնագաւառներէն մէկը: Վերջին Ազգային Ընդհանուր Ժողովը, գումարուած Անթիլիասի մայրավանքին մէջ (Յունիս 2002), յատուկ կարեւորութիւն տուած էր Հայ Դպրոցին, իրրեւ միջնաբերդը սփիւռքահայ գաղութային կեանքին:

Այս առաջադրանքէն մեկնելով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետը եւ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը Անթիլիաս հրաւիրած են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր թեմերու Ուսումնական Նորհուրդներէն ներկայացուցիչները, որոնք 11 եւ 12 Փետրուարին Մայրավանքին մէջ Հանդիպում մը պիտի ունենան:

Ուսումնական խորհուրդներուն այս հանդիպման ընթացքին պիտի քննարկուին հայ վարժարաններու կրթական-ուսումնական երեսները, անոր ներկայ տնտեսական վիճակը, հայ ուսուցչին դիմագրաւած դժուարութիւնները եւ Հայեցի դաստիարակութեան պարզած կացութիւնը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏ

Երկու շաբաթ է ի վեր Լիբանան այցելող հայրենի մանկավարժական պատուիրակութիւնն էր, որ կը բաղկանար «Տարբէ» գիտակրթական համալիրի գլխաւոր տնօրէն Սոկրատ Մկրտչեանէ, «Սփիւռք» գիտատնտեսական հիմնարկի տնօրէն, բանասիրական գիտութիւններու դոկտոր Սերէն Գանիլեանէ եւ Երեւանի Պետական համալսարանի Մանկավարժութեան ամպիոնի վարիչ Ղուկ. Նալիկ Յարութեանէ, երէկ երեկոյեան Անթիլիասի «Կարտըն Թատրոն» պանդոկին մէջ իրարմէ անջատ երկու հանդիպումներ ունեցաւ իբրանահայ մանկավարժներու եւ գրողներու հետ: Մանկավարժներուն եւ գրողներուն հետ տեղի ունեցած հանդիպումները, ըստ «Տարբէ» գիտակրթական համալիրի գլխաւոր տնօրէն Սոկրատ Մկրտչեանի, կը նպատակաւորէին իբրանահայ կրթական մարմիններուն հետ ծանօթացման հանդիպումներուն արդիւններուն լոյսին տակ յետ իբրանահայ մանկավարժներուն եւ մտաւորականութեան կարծիքները Սփիւռքի համար Հայոց Պատմութեան, Գրականութեան եւ Հայոց Լեզուի միացեալ դասագիրքեր պատրաստելու առնչութեամբ:

Սոկրատ Մկրտչեան յայտնեց, որ իբրանահայ կրթական մարմիններուն ղեկավարութեանց հետ անցնող օրերուն տեղի ունեցած ծանօթացման հանդիպումներուն ընթացքին դրական մտտեցում ցուցաբերած է հայրենի մանկավարժական պատուիրակութեան արժանապատեանը: Սոկրատ Մկրտչեանի խոսքերէն ետք հայրենի պատուիրակութիւնը պիտի անցնի գործնական ծրագրի մշակման:

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՄԲՈՒՄ/271

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԶՐՈՅՑ
ԹԱՏԵՐԱԳԻՐ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՇԵՏ**
Երկուշաբթի, 10 Փետրուար 2003, ժամը 7:00ին
«Կարտըն Թատրոն» պանդոկին մէջ
Շեռածայն 04-41 7741
www.gardenotahotel.com/MondayForum.htm

ՀՐԱՊԱՐԱՎԻ ՎՐԱՅ Է ՎԻՉԵՆ ՏԻՉՉԵԼԵՆԵԱՆԻ Հայրենասիրական երգերու ամփոփ սկաւառակը- CD

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս տարի Ս. Սարգիս տօնը կը հանդիպի Կիրակի, 16 Փետրուարին. ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս պիտի կատարուի մատաղորհները:
Բոլոր այն հայրենակիցները, որոնք Ս. Սարգիսի տօնին առիթով ուխտ ունին եւ կը փափաքին մատաղորհ ոչխար նուիրել, թող հաճին կապ պահել Ս. Սարգիս Եկեղեցւոյ թղակակցութեան անդամներուն հետ՝ հեռաձայնելով 01-259861 թիւին եւ կամ անձամբ ներկայանալ գրասենեակ, ամենօր, բացի Շաբաթ օրերէն՝ ժամը 9:00էն 12:30:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ ԿԼԵՆՏԵՅԼ»-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ



Տուրեան եւ Յովհաննէսեան

Կազմակերպութեամբ 10 Նի Երջանային վարչութեան, Երէկ, Ուրբաթ, 7 Փետրուար երեկոյեան ժամը 8:30ին «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ ներկայացուցեալ «Բարի գալուստ Կլենտէյլ» («Ուելքամ Թու Կլենտէյլ») կատակերգութիւնը, բեմադրութեամբ Նարեկ Դուրեանի:

Հայաստանէն Լոս Անճելըս Հաստատուած Երիտասարդի մը ու անոր կնոջ առօրեան ներկայացնելով՝ Նարեկ Դուրեան, Բրիտանի Յովհաննէսեան եւ Արարատ Սարգսեան յաջողեցան հանդիսատեսը ամբողջ թատերգութեան ընթացքին լարուած պահել ու լիաթօք խնդուք պատճառել: (Գործին կ'անդրադառնանք հետագային):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ...

Շարունակուած Ա. Էջնգ

կայանայու կարեւորութիւնը, որովհետեւ միջազգային օրինակներով իրարմէ գործարարել իրեն ուսման պիտի լուծուին միջոց:

Նախագահ Լաիուտ յոյս յայտնեց, որ արաբական եւ երոպական ճիգերը կ'արդիւնաւորուին խաղաղ լուծում մը գտնելով իրար յարաբերութեան վերջ տալով ամերիկեան պիտուրական գործողութիւն կատարելու հաւանականութեան, «որովհետեւ պատերազմի ընտրանքը չի ծառայեր համաշխարհային խաղաղութեան ու կայունութեան»:

Նախագահ Լաիուտ վերահաստատեց, որ Լիբանան պիտի դիմէ հարկեղած քայլերուն՝ դիմադրելու Իսրայէլի կողմէ պահեստի նիւթերուն դէմ շարունակուող շարժումներուն եւ Լիբանանի օդային սահմաններու յաճախակի բռնարարներուն: Ան անցնող, որ Լիբանան միշտ պատրաստ է ապաստանելու բռնագրաւուած իբրանահայ մնացեալ հողերը ինչպէս նաեւ գործադրելու ՄԱԿի բոլոր որոշումները եւ ապաստանելու իսրայէլեան բանտերուն մէջ գտնուող իբրանացի գերիները:

Նախագահ Լաիուտ շնորհակալութիւն յայտնեց Փէթրոնի Ե. Միուրեանի կողմէ Լիբանանի հանդէպ ցուցաբերուած ուշադրութեան համար՝ դրուատելով միութեան կողմէ Լիբանանի տրամադրուած օժանդակութիւնները՝ պահպանման մարզերէն, եւ շեշտելով իբրանահայ վարչակարգին, եւ յատկապէս արդարութեան նախարարութեան կառուցչին մէջ բարեկարգութեան համար Լիբանան - Ե. Միուրեանի գործակցութեան անհրաժեշտութիւնը:

Հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ Լիբանանի մէջ Ե. Միուրեանի ղեկավար Փաթրիք Ռեւո: Փէթրոն գնահատեց իբրանահայ տնտեսութեան արձանագրած բարձր արտադրութիւնը, ինչպէս նաեւ մշակութային եւ առևտրական մարզերուն մէջ Լիբանան - Երոպա գործակցութիւնը՝ յոյս յայտնելով, որ առևտրական կապերը կը զօրանան ու կը յանգին Լիբանանի մէջ երոպական յաւելեալ ներդրումներու:

Փէթրոն նախագահ Լաիուտի եւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի կեցուածքները նկատեց դրական՝ իրարմէ տագնապին վերաբերեալ:

Փէթրոն ընդգծեց, որ միջազգային ընտանիքը որոշած է ՄԱԿի ծիրէն ներս լուծել իրարմէ տագնապը՝ նշելով, որ անհրաժեշտ է լսել վէտիք քննիչներուն տեղեկագիրները, տեսնելու համար, թէ իրարմէն տագնապին խաղաղ լուծում ապահովելու ինչ տարբերակներ կան:

Նախագահ Լաիուտ ընդունեց նաեւ Կիպրոսի արտաքին գործոց նախարար Ժաննա Բարաքի մէջ Կիպրոսի դեպարտմէն Թիւրքիայի հետ թաւաքութեան փոխարինման օգնականութիւնը:

Հանդիպումին քննարկուեցան շրջանային հարցեր, յատկապէս իրարմէ Պաղեստինի տագնապները: Քասուլիտէն նախագահ Լաիուտի փոխանցեց, թէ Կիպրոս կը զօրակցի իրարմէն տագնապին խաղաղ լուծում ապահովելու ընտրանքին:

Arabic calligraphy and logos for the newspaper, including 'السفير' and 'الاستقلال'.

ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան մամուլը երէկուան իր թիւով լուսարձակի տակ բերած է Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի դէմ պատրաստուող պատերազմը, որ անխուսափելի եղած է: Թերթերը նաեւ անդրադարձած են պաղեստինեան բռնագրաւուելու հողերուն վրայ իսրայէլեան ուժերուն կողմէ շարունակուող սպանութիւններուն:

«Նահար» գրած է, որ Պուշ Էլնոզիմանար ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ երկրորդ որոշումի մը, իսկ Թուրքիոյ խորհրդարանը արտօնութիւն կը շնորհէ ամերիկացի պիտուրներուն իր հողերուն վրայ տարածելու համար: Ըստ Թերթին, Փաուրլ կը յայտարարէ. «Իրաքէն ետք Միջին Արեւելքը պիտի կայմակերպենք»:

Թերթը նաեւ նշած է, թէ Ֆրանսայի նախագահ Շիրաք կը յայտնէ, թէ իրենց կեցածը չէ փոխուած եւ ուժի գործածութիւնը վճռական չէ: Ըստ Թերթին, Ֆրանսա կը միտի երրորդ ընտրանք մը հաստատել Պաղեստինի մէջ:

«Նահար»-ի համաձայն, Փիոնկեանի կը սպառնայ հաւանական պատերազմ մը շրջապատելու, իսկ Ռամաֆեյն անհաւանական չի նկատեր պատերազմներու համատեղ պայտուարը:

«Անուար» գրած է. «Ուաշինկթըն կը յայտարարէ, թէ Իրաքի դէմ պատերազմը պիտի վերադառնա Միջին Արեւելքի մէջ ամերիկեան շահերը»:

Արաբական մայրաքաղաքները դիտել կու տան, թէ պատերազմը մտայնու է»:

Ըստ Թերթին, Վատիկան կը յայտնէ, թէ Իրաքի առնչութեամբ Փաուրլի ներկայացուցած փաստերը համովի չէին:

Թերթը նաեւ նշած է, թէ Քուէյթի մէջ ամերիկացի պիտուր մը սպանուեցաւ եւ չորս ուրիշներ վիրաւորուեցան:

«Տիար» օրաթերթին համաձայն, Իրանի դէմ ամերիկեան պատերազմը ստոյգ է կողմէ երկրորդ որոշումի մը, իսկ Թուրքիոյ խորհրդարանը արտօնութիւն կը շնորհէ ամերիկացի պիտուրներուն իր հողերուն վրայ տարածելու համար: Ըստ Թերթին, Փաուրլ կը յայտարարէ. «Իրաքէն ետք Միջին Արեւելքը պիտի կայմակերպենք»:

Թերթը նաեւ նշած է, թէ Ֆրանսայի նախագահ Շիրաք կը յայտնէ, թէ իրենց կեցածը չէ փոխուած եւ ուժի գործածութիւնը վճռական չէ: Ըստ Թերթին, Ֆրանսա կը միտի երրորդ ընտրանք մը հաստատել Պաղեստինի մէջ:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Միացեալ Նահանգները կը իրաւանագնէ մեծազոյն ցամաքային տարածումը Օոցի մէջ, իսկ Լոնտոն կ'ուղարկէ 100 օդանավեր:

Թերթը գրած է. «Փաուրլ կը յայտարարէ. Իրաքի պատերազմը շրջանը արմատական փոփոխութեան պիտի ենթարկէ եւ պիտի օժանդակէ արաբ-իսրայէլեան թշնամութեան անհետացման»:

Ըստ Թերթին, Թուրքիոյ վարչապետ Կիլ կը մերժէ պատերազմի մասնակցիլ, իսկ խորհրդարանը կը հաստատէ Միացեալ Նահանգներուն իր զօրակցութիւնը:

Թերթը նաեւ նշած է, թէ Հիւսիսային Բորնէա կը սպառնայ պատերազմի դիմել, իսկ Ուաշինկթըն կը սպառնայ իր օդակազմին կառավարութեան կայմութեան եւ Շիւուի հետ գործակցութեան միջեւ:

ԸՈՒԵՅԹԻ ԱԶԳ. ՎԱՐՄԱՐԱՆԸ ՎԱՐԻՔԸ ՈՒՆԻ

- 1.- ՓՈՒՍ ՏՆՕՐԵՄ
Ա. Համալսարանական վկայական ու փորձառութիւնը անհրաժեշտ են:
Բ.- Վարձատրութիւնը՝ ամսական 1000-1200 տողար եւ տան վարձը:
2.- Հայերէն լեզուի դասատուի
Ա.- Համալսարանական համալսարանական վկայական ու փորձառութիւնը անհրաժեշտ են:
Բ.- Վարձատրութիւնը՝ ամսական 650 տողար եւ տան վարձը մասնակի վճարում:
Չեռագիր դիմումը, վկայականի եւ փորձառութեան հաստատագիրներու պատճեններն ու C. V. ուղարկել հետեւեալ հասցեին.
Armenian School
P. O. Box 34434 Adilieh 73255 Kuwait
Fax: 00965 - 5313870



ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՄԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԶԱՐԵՀ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶԻ ԿՐՆԱՐ ՄԵՌՆԻԼ

ԶԱՐԵՀԵԱՆ ԿԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Խառնից դիմաց լույս ճառագայթեց իր դեմքին: Ատելուբեան դիմաց սե՛ր ծորաց իր սրտին: Զարուբեան դիմաց բարոյի լեզ յորդեցաւ իր հոգիին: Անէծ- րին դիմաց օրհնութիւն բոլորեցաւ իր շրթներէն:

Ներող հայրը եղաւ բոլորին, երբ նոյնիսկ իր հովիւներէն մէկ մասը ուրա- ցաւ գինը: Բարի հովիւր եղաւ բոլորին, երբ նոյնիսկ իր հօտին մէկ մասը դար- ասւ մոլորեալ:

Իր անձին վեհութեամբ, իր սրտին բարութեամբ, իր հոգիին ազնուութեամբ եղաւ իրաւ մարդ, նշմարի տ հոգեւորական, բարի եւ քաջ հովուապետ:

Սիրեց բոլորը. ապրեցաւ բոլորին համար. գործեց բոլորին համար. նահա- տակուեցաւ բոլորին համար:

Ճիշդ է, Զարեհ կաթողիկոս եօթնամեայ իր գահակալութեան ընթացքին շէնք չշինեց, բայց ինք դարձաւ ոգեղեն շէնք, որուն մէջ Կիլիկեան Աթոռը ինքզինք վերանորոգեց ու վերակենսաւորեց, որուն մէջ ինքզինք զգաց տաք ու ապա- հով արտաքին ցուրտին ու բուրբին դէմ:

Ճիշդ է, Զարեհ կաթողիկոս գիրք չտպեց, բայց իր կեանքը վերածեց կեն- դանի մատենանի մը, ուր կեանքի կոչուեցաւ հայոց պատմութիւնը ամբողջ իր երգով ու վերքով, իր տառապանքով ու յաղթութեամբ:

Ճիշդ է, Զարեհ կաթողիկոս հովուապետական այցելութիւն չտուաւ իր ժո- դովուրդին, Լիբանանէն դուրս չեղաւ ան երբեք, շատեր չտեսան գինք երբեք, բայց ան իր ժողովուրդը ունեցաւ իր հոգիին ու կեանքին մէջ, ու ժողովուրդը ինք Լիբանանէն մինչեւ հեռուոր Ամերիկա իր պաշտելի վեհափառը ունեցաւ իր սրտին մէջ:

Եօթը տարիներ, լուռ տառապանքի ու կենդանի նահատակութեան եօթը գող- գործներ, մարան մէջ եօթը գարուններ, պատմութիւն կերտած, բայց պատմու- րին չզարձող հաւատքով, կամքով ու տեսլիքով լեցուն եօթը «դարե՛ր»...

1963, Փետրուար 18:

Խաչի ճամբու վրայ կ'իյնայ խաչեալը: Ո՛չ, հազար անգամ ոչ, Մեծ խաչ- եալի հետքերուն հետեւող ու դէպի լոյս ու նշմարութիւն ընթացող մարդիկ չեն մեկնել: Անոնք կը դառնան սուրբ, հերոս, նահատակ: Վկայ պատմութիւնը: Ու չմեռաւ, Զարեհ կաթողիկոս մնաց Անթիլիասի վանքին մէն մի քարին մէջ որպէս հոգեշնչող ներկայութիւն. մնաց Հայոց. եկեղեցւոյ աղօթքին ու խուն- կին մէջ՝ որպէս պայծառակերպող գործիչին:

Զարեհ կաթողիկոս մնաց մեր մէջ ու եղաւ Գարեգին կաթողիկոս ու Գարե- վանքի գորացուն, մշակութային առաքելութեան աշխուժացուն, միջազգային միջ-եկեղեցական յարաբերութեան կազմակերպում ու տարածում:

Զարեհ կաթողիկոս մնաց մեր մէջ ու եղաւ վաւերական հայու, բարի ու անձնող իր հովիւի նշմարիտ տիպար:

Զարեհ կաթողիկոս չի կրնար մեռնիլ: Վա՛յ մեզի եթէ մե՛նք մեռցնենք Զա- րեհ Սրբանչելին...

Ես այնպէս կը զգամ, որ այսօր վախճանեալ կաթողիկոսի մը յիշատակը չէ որ կը նշենք: Զարեհ կաթողիկոս անձ մը չէ սուկ, այլ իր անձի պարունակէն դուրս ելած ու բոլոր ժամանակներուն վրայ տարածուող ոգի՛ է, կեանք է, առաքելութիւն է, տեսլիք է ու հրաւէր՝ կենդանի նահատակութեամբ լոյսին քայլելու, նշմարութեան ձգտելու: Աւետարանը ապրելու, հայօրէն ապրելու ու գործելու, ու նոյնիսկ «իմացեալ մահով» համայնական հայութեան գերա- գոյն շահերը պաշտպանելու:

ԱՐԱՄ ԱՐՔ. ՔԵՇԻՇԵԱՆ

(«Հասկ», Մարտ-Ապրիլ 1988)

ԿԻՍՈՒՄԾ ՆՇԽԱՐԸ

Յստակ, վճռական բառերով պէտք է ըստի, որ Կիլիկիոյ կաթողիկոսու- րեան ընդհանուր պատմութեան շրջա- գծին մէջ դիտուած՝ անկիւնադարձ մը եղաւ իր եօթնամեայ կաթողիկոսու- րիւնը: «ԶԱՐԵՀԵԱՆ ԾՐՋԱՆ» ոսկի բառերով պիտի բացուի օր մը Կիլի- կիոյ կաթողիկոսութեան պատմու- րեան գիրքի վերջին գլուխը: Դեռ այսօր չենք զգար տարողութիւնը իր գործին, որովհետեւ իր անձը գրասէլ է մեր ողջ էութիւնը՝ զգալու ու դատելու մեր մտքով ու սիրով իր անմտանայի անձին սերտօրէն կապած ըլլալով: Վաղը աւե- լի պիտի յստականայ մեր միտքը՝ կա- րենալ ըմբռնելու համար մեծութիւնը իր գործին...

Բայց... - ու այս «բայց»ը կը պատռէ արդէն իմ սիրտը այս պահուն՝ այս բո- լոր արծաթեցնելով, հարուստ հոգիով այս անմահ հոգեւորական մարդը մենք չկրցանք վայելել իր լիութեանը մէջ: Նշխար մըն էր ու մենք հաղորդը- ւեցանք կիսով միայն ու միւս կէտը անհ հոգին յանձնեցինք:

Համակ սէր էր: Բայց եղան մարդիկ, որոնք ատեցին գինք, որովհետեւ իրենց ապրումները սիրոյ բխումը չէին:

Համակ լոյս էր: Բայց եղան մարդիկ, որոնք արհա- մարհեցին գինք, որովհետեւ իրենց գործերը խաւար էին:

Համակ բարոյական էր: Բայց եղան մարդիկ, որոնք անգու- նեցին գինք, որովհետեւ իրենց ծրա- գիրները չար էին:

Համակ բարոյական էր: Բայց եղան մարդիկ, որոնք անգու- նեցին գինք, որովհետեւ իրենց ծրա- գիրները չար էին:

Բոլորին պատասխանեց սիրոյ եւ ներողութեան զգացումներով: Չէր կրնար ուրիշ պատասխան տալ, եւ տուաւ ա՛յն՝ ինչ որ իր քրիստոնէայի եւ հայու մեծ սիրտը կը պարունակէր:

Իր արեան ճերմակ ու կարմիր գնդիկներէն էին կարծէք քրիստոնէա- կան մարտը սէր եւ հայկական հարա- գատ ապրում: Ատոնք էին իր գէնքերը եւ միայն ասոնցմով պայքարեցաւ: Ու յաղթեց: Իր մահը եղաւ իր յաղթանա- կի երգը, որուն շնչով ու կշռովով բերուող բերուող հայ մարդիկ հետեւեցան իրեն դէպի յաղթութեան կամարը, որ իր գերեզմանը եղաւ՝ այնքան կանուխ բացուած Անթիլիասի հոգին սիրտին վրայ:

Հիմա, երբ իր գերեզմանը որպէս

Զարեհ կաթողիկոսները կրնան մեռնիլ: Բայց ինձի պիտի յաջորդեն անր Զարեհ կաթողիկոսները: Ինձի պիտի յաջորդէ ուրիշ սերունդ մը: Անոնք ալ իրենց արիւնք պիտի թափեն: Եւ սակայն, կանք ու պիտի մնանք որպէս արի ժողովուրդ: Որպէս ՀԱՅ Եւ ՏՂԱՍՄԱՐԳ:

1949 ԶԱՐԵՀ ԵՊՍ.

ան մըն է իր գերեզմանը մեր կեանքին մէջ: Բայց ոչ՝ վերջապէտ: Եթէ ըլ- կար վերջապէտ՝ այն ատեն իսկապէս պիտի տառապէր իր հոգին անար- մանելի տագնապով:

Պիտի քայլէ այս կաթողիկոսութիւնը իր ծառայութեան դարաւոր ճամբին: Ինք երկինքէն լուսապայծառ աստղի ման պիտի առաջնորդէ մեր քայլե- րը: Հայ եկեղեցւոյ բոլոր անկեղծ ու նահապետախնդիր գաւազները առաւել սիրով պիտի նուիրուին այս Աթոռի պայծառութեան վեհակամ ու կանա- կան գործին, որուն համար իր անձն ընծայեց որպէս կամարող զոհ Երա- նաշնորհ Զարեհ Ա. կաթողիկոս:

Պիտի յաւետ ապրի, լոյսով ապրի, փառքով ապրի: Եւ... ա՛յ մեզմով ապ- րի:

Գիտակցիմք այս ճշմարտութեան՝ ու երթանք դէպի... ԳՈՐԾ:

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

(Քառասունըին առիթով)

Հիմա, երբ իր գերեզմանը որպէս

«ՃՇՄԱՐՏԱՊԷՍ ԵՒ ՈՉ ԿԱՐԾԵՕՔ»



«Սեր աղօթքն է և մաղթանքը, մեր սկզբունքն է և ուղղութիւնը մեր բոլոր ծառայութեանը և գործու- նեցումն ընթացքին կարենալ քսել: «Երբ ԱՍՏՈՒՄԸ ԸՆԴ ԱՄԵՉ Է, Ո՛Վ ԻՅԷ ՄԵՉ ՀԿԱՎԱՅԱԿ»: Երբ Աստուած ու Օրէնք մեզի հետ են, ո՛վ է մեզի հակառակ: «Աստուծոյ հետ ըլլալը, ըլլալ անոր հոգիին հետ՝ որպէսզի բանալ յամբանոյ և հոգիի մեր աշխարհ, առաջ- նորդէ մեզ յողով ճանապարհ խաղաղութեան...»:

Մեծի Տանն Կիլիկիոյ գահ բարձրացման առաջին տարեդարձին առիթով արտասանու- ած սիրոյ և հաւատքի այս խօսքերը բա- րացուցական են ըստ ամենայնի: Մտայլ ու փոթորակալի ժամանակաշրջանի մը ուրաջ- ման ու քրպարտանքի սեւ ալեկոծումնե- րուն դիմաց սիրոյ, հաւատքի, բարութեան, հեկոթեան, ներողամտութեան լուսապա- տարագր խիպախարար բարձրացուցած եր- ջանկալիշատակ Զարեհ վեհափառի լուսա- ճառագ ճշմարտութիւնը յաւաստյալ կ'ար- տայայտէ անընդհանր կերպարը հայ ժողո- վուրդի այս պնդարիւն ծառային, որ ժո- դովուրդին ծոցէն ծնաւ, ժողովուրդին հետ ապրեցաւ, ժողովուրդին հետ տառապեցաւ եւ, իբրեւ ճշմարիտ հովուապետը իր հօտին՝ ժո- դովուրդին վիշտն ու տառապանքը թեթեւը- նելոյ, մարմնոյ եւ հոգւոյ կոյր աշքերը բա- նալու, ուրաջման խաւարը յոյսին ցորու- թեամբ տարտղնելու եւ յաւերժական ճշմար- տութիւնները կեանքին օրհնակով աւանդե- լու անանձնական ընծայաբերումով մը ժողո- վուրդին փոխարէն ի՛նք խաչ բարձրացաւ:

Աստուածորդիին օրհնակով:

Եւ յաղթանակեց: Անմահացաւ: Եւ հայ ժո- դովուրդին կտակեց արութեան ու բարու- թեան, խիպախութեան ու պայծառամտու- թեան, ներողամտութեան ու վճռակամու- թեան, սիրոյ ու նուիրումի յաւերժաշէն ճշմար- րիտ դասեր: Անձնամոռ գործունէութեան եւ նուիրումի մէկ պնդարձոյ պատգամը:

Յար եւ նման Արարչին փառքն ու յաւեր- ժութիւնը ողջ տիեզերքով մէկ պատարա- ցած Մեծ Լուսահանդերձեալին՝ ինք էս ըն- թացաւ Աստուածորդիին օրհնակով, հա- մեւս ու խնայարի, պարզ ու յարթաբալլ, գոր- ծեց ու քարոզեց, թափանցեց ժողովուրդին սրտին ներս, եւ իրաւամբ դարձաւ հայոց պատմութեան ազգակերտ պատգամներն ու աղօթքները իր հոգիին ու ձայնին, հաւատ- քին ու գիտակցութեան, տեսլիկին եւ ուխտին մէջ համաձայնած երկնառաք բացառիկ ու սքանչելի հովիւ:

Բանն էր իր հարստութիւնը, արդարու- թիւնն էր իր դրօշակը, հաւատքն էր իր կեանքի նկանակը, սէրն էր իր թագը, ներո- դամտութիւնն էր իր սասն եւ համբոյրն էր իր շառաչումն ապառակը: Եւ որովհետեւ երկ- նային յաւերժական գանձերով ի վերուստ պարգեւեալ հոգիի ու մտքի մեծահարուստ մըն էր Զարեհ Փայապէան՝ անուն այս յաղ- թագեղ հոգեւորականը, Բերիոյ թեմէն Կիլի- կիոյ կաթողիկոսութեան նրաւոր գահ եւ ան- կէ մինչեւ երկնային յաւերժայնս բարձունք- ներ իր խոյանքը եղաւ բացառիկ ու արագ: Աստուածային արագութեամբ, գրաւորութեամբ եւ անբացատրելի խորհրդաւորութեամբ:

Խաչելութեան եօթը գողգործները բարձ- րացաւ լուռ ու անտրտուն ինքնաբաշխու- մով: «Տէր անցո յինէն պատկա պայս» չը- սաւ երբեք, ո՛չ մէկ օր եւ ո՛չ մէկ ժամ: Ընդ- հակառակն, եօթը տարի սէր ու բարութիւն քարոզեց, լոյս ու եղբայրաբարութիւն փա- տարանեց, միութիւն ու գերմարդկային առա- քինութիւններ յորդորեց եւ իր հայաբոյր նկարագրով, անսասն հաւատքով, արտա- կարգ ներողամտութեամբ ու կենդանի օրհ- նակով արժանատրապէս եղաւ իր ալեկոծ ժամանակին հայոց եպիսկոպոսականութեան:

Գուրգուրաց իրեն վստահուած «սրբա- պան աւանդ»ին վրայ: Իր աչքի լոյսն ու կեանքն աւելի: Եւ ստեղծութեան ու հայա- ծանրի ամէն տեսակի փոթորիկներուն դէմ՝ իր յաղթ կուրծքը լայն պարպեց հաւատքին ցորութեամբ պրկուած առագաստ իբրեւ, եղաւ փրկարար նաւ ու նաւավար, ցոհ ու պատարագիչ եւ անդադար բաշխուող մաս ու նշխար: Ճեղքեց մորիկներն ու փոթորիկ- ները, խոյանցաւ յաղթաճէշտ եւ ապահով քա- րափ հասցուց տարագիր հայութեան ու Մե- ծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան աստ- նածակներտ ղարաւոր նաւը:

Հասցո՛ր: Խոցուեցաւ սրտէն ստեղծաբար: Երբեք: Չտապալեցաւ՝ երբեք, այլ իբրեւ հաւատքի ու սիրոյ ճշմարտագեղ կաղնի՝ ա՛յ աւելի արմատացաւ հայ հոգիներուն մէջ՝ վեհ ու առաքինի, «ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք», եւ՛ յաւերժացաւ...

Ա. ԿԵՐԱՎԱՍԵԱՆ

Կարճ ժամանակի մէջ - Հագիւ 6 - 7 տարի, - Զարեհ Առաջին վեհափառի ղեկավարութեան ներքեւ, Ան- թիլիասը նիւթապէս եւ բարոյապէս ծաղկեցաւ, Գարեգինի գոլուս եկան գարգացած, իրենց պաշ- տօնին գիտակցեց երիտասարդ միաբաններ: Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը դարձաւ բարոյական հեղինա- կութեան կենդրոն արտաքին աշխարհի եւ հայ ժողո- վուրդի համար: Զարեհ կաթողիկոս բախտաւոր եղաւ այն տեսակէտից, որ ունեցաւ անկեղծ գործակիցներ վանքից ներս եւ վանքից ցեղեց բոլորին, եւ յուղարկաւ- ռութիւնը եղաւ համաժողովրդական սիրոյ եւ պաշ- տամունքի անկեղծ արտայայտութիւն: Վաղ է դեռ, թարմ գերեզմանի առջեւ, լիակատար գնահատու- թիւնը տալու Զարեհ Ա. կաթողիկոսի պատմական դե- րին հայ կեանքում, բայց անկասկած է որ պատմու- թիւնը նրա անուրը կը դնէ հայ մեծ անհատներ շար- թում: Անթիլիասի պատմութեան վերջին վեց տարի- ները կը կոչուին Զարեհեան Շրջան՝ Զարեհեան սե- րունդով եւ Զարեհեան դաղափարներով:

Ինչ որ հողեղէն էր կը մոռացուի ժամանակին հետ. բայց մեր տեսողութեան առջեւ միշտ կենդանի ու սի- բելի կը մնայ Զարեհ վեհափառի ոգեղէն պատկերը, Անթիլիասի վեհափառի պատգամը՝ փառաւոր մօ- րուքը հովին, քաղցր ժպիտը աչքերում:

Ա. ՎՐԱՅԵԱՆ

Մա՛տ է թիւր անոց, որոնք գիտունի, իմպսու- նի կամ քերթողի համբաւ կը շահին: Բայց շա՛տ քիչ է եւ հետզհետեւ աւելի քիչ կը դառնայ ամբասիր մար- դու կոչումով մա՛րդը բարձրացնող անուններու թիւը:

Դուն հայ ժողովուրդի արժանաւոր գաւազն եղար եւ Աստուծոյ հարազատ որդին: Հայ ազգի եւ հայ եկեղեցիի բոլորանունը սպասարկուց միանգամայն, որովհետեւ քեզի համար այս երկու արժեքները մէկ էին եւ անբաժանելի:

Եւ այսօր, թէ՛ ժողովուրդ, թէ՛ եկեղեցի, քու քաղցր անունիդ, քու ծաղկուն յիշատակիդ բոլորով տողորուած՝ չեն ուզեր հաւատալ, չեն կրնա՛ր հա- ւատալ, որ դուն չկաս:

Ա. ԻՇԽԱՆ

Հիմա մեր պիտուն մէջն է Զարեհ վեհափառի փշրուած սիրտը՝ իր բոլոր կատրոններով...

Այդ սիրտին կատրոնները կ'ըսեն, թէ՛ հայ ժողովուր- դի մարմնին համար ջերմութիւն ու գուրգուրանք միայն արտահոսած է այդ սիրտը:

Այդ սիրտին կատրոնները կ'ըսեն, թէ՛ այդ սիրտը իր- բեւ շողախ ունեցած է բարեկամութիւնը, ազնուու- թիւնը, անկեղծութիւնը, հաւատարմութիւնը:

Բոլոր կիրքերը, ատելութիւնները, վրէժխնդրու- թիւնները իբրեւ սեւ արեւն հասած են այդ սիրտին, գայն յողմեցուցած, չարաբար ու սպառած են, ապա՝ միւս կողմէն մաքրուած ու գտուած՝ վարդակարմիր գոյնով հոսած են՝ վերածուած ազնուութեան ու բա- րութեան:

Բայց այդ սիրտը չտոկաց մարդկային երկու չա- րութեանց՝ ապրեախտութեան եւ անհասկացողու- թեան, որոնց պնդանք գնդիկները ի վերջոյ փակե- ցին անոր մարդ երակներէն եւ գայն պայթեցուցին, վե- րածելով կատրոններու:

Ազնիւ սիրտ մըն էր Զարեհ վեհափառը: Համակ սիրտ էր Զարեհ կաթողիկոսը:

Կտրելէն առաջ սիրուելի՛ք սիրտ մըն էր Զարեհ վեհափառը:

Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

Մեր գիտցած, կարդացած, տարիներ ամբողջ սերտած գրականութեան մէկ երկը չգրեց Կիլիկեան Աթոռին մեծ նշանակալը, որպէսզի իրաւունք ունե- ցայինք «Բագին»ի գրական դեմքերու Էջերէն մէկ քանին յատկացնելու իրեն: Մենք այդ իրաւունքը տուինք մեզի սակայն՝ գրականութեան ու արուեստ- ի վեհաբաժնի այս հովանաւորը, գրողներուն հա- մար Պիքֆայա գրական շարաթ ստեղծած այս Հայ- րապետը, հեղինակ համարելով, գիրով չգրուած, բայց գերարժէք գիրքի մը, որ իր ապրած կեանքը եղաւ, մանաւանդ եօթն տարուան շրջանի մը: Այդ գիրքին մասնաւորաբար վերջին հատորը, լու- սահուն շարադրութեամբ մը յօրհնուած կարծես, ամէնէն յուզիչ, խոր ու խոռովիչ վեպերէն մին եղաւ, որ ռեւէ հեղինակ յաջողած ըլլալ գրել, այդքան հա- րազատութեամբ, այդքան կարեւ ժամանակի մը մէջ: Տառապանքի եւ առաքինութեան գիրք մը՝ չտպուած բնու, բայց ապրուած միշտ, էջ առ էջ, յանախ տող առ տող:

Հատուածի մը կողմէ չընդունուածի, մի՛շտ մերժը- ւածի կեանք մը ապրելով, իր դառնութիւնն ու ցաւը կրելով, ու դառնալով ամէն օր աւելի ազնիւ ու առաքինի, գրած եղաւ Զարեհ վեհափառ իր համա- տարած սիրոյ ու խորակակիծ ապրումին կրակէ հա- տորը, լոյսի ու արիւնի խոնուրդ իր կեանքին հեք- իա թ գիրքը, որուն վերջին էջին տակ, թո՛ղ ներքէ մեզի լոյսներու մէջ հանգչող իր լոյս հոգին, եթէ մենք ուզենք գրել իմ մահ հայ մեծ բանաստեղծի մը նմանողութեամբ:

- Վասն ժողովուրդիդ ու վասն խաչիդ մեռար, դուն շա՛տ ապրեցար...

ԵԳ. ՊՕՅԱՃԵԱՆ

Հայ եկեղեցիի յաղթանակին թափօրն էր այդ օրը: Ով գիտէ անտարագելի ի՛նչ մղումներու տիպէքքի- քի յանգումն էր պա՛հը, երբ հազարաւոր հայութիւն, իր մահացած կաթողիկոսի խորհրդանշանին ընդմէ- ջէն՝ այնքան օրացած զգաց իր սէրը հանդէպ իր եկե- ղեցիին, այնքան աւելի օրացած զգաց Հայ ազգի մէջ: Բարոյական Հայրենիքն էր, որ իրականութիւն կը դառնար շնորհիւ Զարեհ վեհափառի մէկ գաւազին: Ու- րիշ



Մանկապատանեկան

ՊԱՅՆԱ՞Ռ ՕՂ, ԹԵ ԱՆՁՐԵՒ ՈՒ ՓՈԹՈՐԻԿ

Գիտի՞ր, թե բնութիւնը ուսում-նասիրելով կարելի է նախատեսել օրուան օդերեւոյթը...

ՉՈՒԿԻՆ
ՕՂԵՐԵՒՈՒԹԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ
Ձուկերը կը բարձրանան ջուրին





ՀԱՍԱՆՍՕՍ ԼՈՒՍԻՆԸ
Եթէ լուսինին շուրջ լուսաւոր շրջանակ մը կ'երեւի, կը նշանակէ, թէ երկինքը կուտակուած է անձրեւաբեր ամպերով:

ԾԻԾԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԹՈՒՉՔԸ
Երբ ծիծեռնակը բարձրէն կը թռչի, ան կ'որոսայ այն ճանճերը, որոնք կը գտնուին պայծառ օդի տաքուկ հոսանքներուն մէջ, իսկ եթէ ան ցածէն կը թռչի, կը նշանակէ, թէ այդ տաքուկ հոսանքները այլեւս գոյութիւն չունին: Անձրեւը մօտ է...

ՁԱՏԿԱՃՃԻՆ ՓՈՐՉԸ
Եթէ զատկաճճի մը նշմարես, զայն մատիդ

մակերեսը, սակայն չեն ուտեր մեր նետած կարթին կերը: Ուրեմն՝ վերարկուող պատրաստէ՛. ասիկա գէշ օդի նշան է: Իսկ եթէ անոնք ջուրէն դուրս ցատկեն միջատ որսալու համար, ա՛յ աւելի զգուշ պէտք է ըլլաս, որովհետեւ կը նշանակէ, թէ անձրեւը մօտ է:



վրայ դիր: Ան անմիջապէս կը թռչի՞. անկասկած պայծառ օդը: Ան մատիդ վրայ կը յառաջանայ՝ կամաց-կամաց. Ուշադրութիւն, օդը պիտի փոխուի:

ՁԱՅԻՆ ՈՐԳԸ
Եթէ ճամբուկ վրայ որդ կը տեսնես, ըսել է, թէ անձրեւը հեռու չէ: Հին ժամանակներէն ի վեր որդերը սովորութիւն

ՀԱՒՈՒՆ «ԽՕՍՔԵՐԸ»
Կ'անձրեւէ՞: Հաւերը անձրեւին տակ կը մնան: Գէշ նշան է. անձրեւը երկար պիտի տեւէ: Անոնք կը վազեն անձրեւէն պաշտպանուելու՞: Ո՛ւճ, արեւը



ունին հողին մակերեսը ելլելու անձրեւէն ճիշդ առաջ:

ԳԻՏԵՒՐ, ԹԵ...
- Եթէ կատուը կրակը փնտռէ, գէշ է օդը:
- Եթէ աքորը կէսօրին երգէ, տաք է օդը:
- Եթէ աղանձին թռչի՝ քի ժամանակ «վուվուէ», պայծառ է օդը:

- Եթէ խուրդը իր ծակին պատերը բարձրացնէ, անձրեւոտ է:
- Եթէ ճնդուկները հաւաքուին եւ ճուղին տանիքներուն տակը, փոթորիկ է:

ՀԱՐՑԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- 1) Ո՞ւր կը գտնուի Հիւսիսային Կիւբոյ մէջ
 - Ասիոյ մէջ
 - Աֆրիկայի մէջ
 - Ովկիանիոյ մէջ
- 2) Գիւլի ո՞ւր կը տանի որկորը:
 - Դէպի աղիք
 - Դէպի լեարդ
 - Դէպի ստամոքս
- 3) Քանի՞ գոյն կայ ծիածանին մէջ:
 - 5 գոյն
 - 7 գոյն
 - 10 գոյն
- 4) Ի՞նչի կը ծառայէին եգիպտոսի բուրգերը:
 - Անոնք փարաւոններուն գերեզմաններն են
 - Պտուղի եւ բանջարեղէններու զոց շուկաներ
 - Աղօթքի վարձեր
- 5) Ո՞ւր կ'ապրին Գերմանիայի Զիւրիխը:
 - Հիւսիսային բեւեռին մէջ
 - Միացեալ Նահանգներ

- 6) Ամերիկո Վեսփուէի իր անունը տուած է ո՞ր երկրին:
 - Բրազիլ
 - Աւստրալիոյ մէջ
- 7) Հրատ մոլորակը երկրագունդէն աւելի պոսի Կ է, թէ մեծ:
 - 4
 - 5
 - 6
- 8) Միաձայն ունի եօթը գոյն: Սակայն մենք այդ քանի՞ հատը կրնանք տեսնել:
 - 4
 - 5
 - 6
 - 9) Ընդհան ի՞նչ տեսակի անասուն մըն է:
 - Ձուկի տեսակ
 - Թռչուն
 - Գիշատիչ
 - 10) Ի՞նչ հնարեց Կալիփսոն 1610 թուականին:
 - Մանրագիտակը
 - Հեռագիտակը
 - Առաջին օդանավը
- 11) Ո՞րն է աշխարհի ամէնէն մեծ իսլամական երկիրը:
 - 12) Ի՞նչ արագութեամբ կը վազէ ջայլամը:
 - Ժամական 10 քմ.
 - Ժամական 25 քմ.
 - Ժամական 40 քմ.
 - 13) Ո՞վ ստացաւ նուազագէտ մրցանակ մը շոքարակումից անունը տալով:
 - Փիեռ եւ Մարի Գիւրի
 - Մենտելիե
 - Նիւթըն
 - 14) Որո՞նք են Հոմի անասնաբանական հիմնադրուները:
 - 15) Ո՞րն ովկիանոսին մէջ կը գտնուի Մատակասքար կղզին:
 - Խաղաղական ովկիանոսին մէջ
 - Հնդկաց ովկիանոսին մէջ
 - Ատլանտեան ոսկիանոսին մէջ

(Պատասխաններ էջ 10)

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ԿՈԿՈՐԴԻՆ ՄԷՁ ԳՈՒՆԴԻ ՄԸ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՆԵՆԱՆՔ...

... Երբ կ'ուզենք լալ: Երբ մենք տխուր կ'ըլլանք կամ կը ցաւինք, կուտակուած է մարմնին կողմէ հակազդեցութիւն մըն է, որ մեզի կարելիութիւնը կու տայ հաւաքելու եւ արտաքսելու մեր նեղութիւնը կամ ցաւը: Ի՞նչ կը պատահի, երբ մենք առատ արցունքներ կը թափենք: Արիւնը կը խուժէ դէպի արցունք արտադրող գեղձերը, սակայն նաեւ՝ դէպի ձայնային լարերը, ստոծանին եւ շնչային մկանները: Կը սկսինք ցնցուելով շնչել: Սակայն, եթէ դուն արցունքները զսպես, մկանային ճնշում մը կը յառաջանայ. արգելք մը, որ կողորդիդ մէջ «գունդ» մը ունենալու տպաւորութիւնը կու տայ: Հետեւաբար նախընտրելի է ինքզինք զսպել եւ լալ՝ ձերբազատելու համար ճնշումներէն:

ԱՆՇԱՄԱՍԻ

ԳԵՂԵՑԻԿ ԳԱՂՈՒԹ ՄԸ



Հեռուէն դիտուած՝ կարծէք հակայական սունկ մըն է: Սակայն, երբ մօտենանք, պիտի տեսնենք, թէ անոր գլխարկը կազմուած է իրարու կապուած չոր խոտերէ: Մօտաւորապէս 4 մետր բարձրութիւն ունեցող այս «կառոյցը» շինուած է ճնդուկներու չափով թռչուններու կողմէ: Այս թռչունները կ'ապրին խումբով: Միայն արունները կը մասնակցին «շինարարութեան»: Երբ բոյնը պատրաստ ըլլայ, անոնք կը կանչեն էգերը: Իւրաքանչիւր զոյգ ունի իր սենեակը, իր առանձին մուտքով: Բոյնը կը մեծնայ ամէն տարի՝ նոր «գիշերօթիկներ» ընդունելու համար: Ան կրնայ ընդունել մինչեւ 300 թռչուն:

2003 Հ.Յ.Դ. Լ.Ե.Մ. «ԳՐՕՇԱԿ» ՄԱՍՆԱՃՈՒՄ

ՀԱՏՐԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

17 ՓԵՏՐՈՒՄԸՆ ՍԱՍԵԱՆ, ՆԻԿՈՒ ԴՊՐԱՆ ԱՎՈՒՄԻ «ՍԱՐԳՍ ԱՆՆԱՌԻՐԱՆ» ՄԱԿԵՆ ՆԵՐԱ:

ՍԱՆՐԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵՈՒԱԶՅԵԼ 03 420639 ԹՈՒՆ:

BALTAIAN ELECTRIC

810 ՀԱՅ ԱԲԵՏ. ԳՈՒԼԵՃԻ 80 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ


ՁԱՁԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵԱՒ ԱՒՈ ԹԻՒԹԻՒՆԸ ԱՆԿԻ ԵՒ ԻՐ ԽՈՒՄՔԻՆ ԿՈՂԱՄԷ

Շարք, 8 Փետրուար 2003, երեկոյան ժամը 8:30-ին Հայ Աւետ. Ա. Եկեղեցոյ հանդիսարանին մէջ

Սուտըը տոմսով

Տոմսերը ստանալու համար դիմել ՊԱՐԻՆ ԽԱՍՏ, ԳԵՌԳԵԱՆ ԴԵՂԱՐԱՆ (Պուրճ Համնուտ) ՍԻՍԱ (Ձալքա), MULTI-OBJET (Սըզդեր) ԵՒ ԴՊՐՈՅԵՆ (Հեռ. 01/349816)

Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրնա՞ս շարունակել շարքը՝ համապատասխանող դէմքերով:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր պատկի հայրը: Անիկն հայրը ունի պէս, բայց ոչ գլխարկ: Յովկիկն հայրը պէս չունի: Ալինին հայրը Նանօրին հօր քովը կեցած է: Նանօրին հայրը գլխարկ մը դրած է:

15 ՔԻԼՕ 500 ԿՐԱՄ

5 ՔԻԼՕ 300 ԿՐԱՄ 1 ՔԻԼՕ

200 ԿՐԱՄ 300 ԿՐԱՄ 35 ՔԻԼՕ

200 ԿՐԱՄ 1 ՔԻԼՕ

Որքա՞ն պիտի կշռէ կառքը, երբ բոլոր առարկաները մէջը դրուին:



Կրնա՞ս գտնել անջրպետանունը պակտող կտորը:

Պատրաստեց՝ ՇՈՐԿԻ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանը պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ԱԿԱՆՈՒՄԸ ԳՕՏԻ ՄԸ՝

ԹԱՅՊԵ ԶԱՂԱՔԻՆ ՄԵՎ ՄՉԿԻԹԻՆ ՄԵՋ

ԵՐՈՒՍԱԴԵՄ, 7 (ԱՅՓ).- Իսրայելյան ոստիկանությունը ակա...

Ժիհադի անդամ երկու պիստոլետներով կողմ...

րոնի մեկ բանբերը ըստ, որ գոտիին յայտնաբերու...

ՄԻԱԾԵԱԼ ՆԱՀԱՆ ԳՆԵՐՈՒ ՀԵՏ ԿՈՐԻՋԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ ՊԱՐԱԳԱՅԻՆ

ՔՈՐԵԱԿԱՆ ԹԵՐԱԿՂՁԻՆ ՄՈՒՆԻՐԻ ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԻ

ԿԸ ԶՈՒՐՇԱՅԻՆ ՓՈՒՆԿԵԱՆԿ

Հիսիսային Քորեա երկրի կոնգրեսը 2003 թվականին...

ման գծով: Հիսիսային Քորեայի պաշտոնական գործակա...

Մ. Նահանգներում պաշտպանությունն ա...

ՔԱԿԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՀԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԴԻՄ՝ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՆՆԵՐ

ՊԵՐՍԻՆ, 7 (ԱՅՓ).- Գերմանական իշխանու...

թաղրեայ դերակատարու թեան համար: Ըստ հաղորդագրու...

Երկու անձերը ձերբա կայուն են: ՔԱԿԻ գործունեու...

ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻՆ ԱՆԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՎՏԱՆԳ

Մ. Նահանգներ Հինգաբարձի օր աշխարհի տարածքին գտնուող...

րիկացի քաղաքացիները կրնան ոչ առանձին...

իրենց գտնուած վայրերն են: Նոյեմբերին կատար...

ՍՍՏՍՄ ՀԻՒՄԷՅՆ ՊԵՏՔ Է ԳԻՏՆԱՅ...

Շարունակուած Ա. ԷջԷՄ

շուրջ մը: Շիրաք աւելցուց, որ պատերազմը պի...

հոշակման: Միւս կողմէ, Իրաքի փոխ վարչապետ Թարք...

ներ հետապնդելու համար: Ե ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Խորհրդարանի նախագահ...

Ֆրանսայի վարչապետ Ժան Փիրե Ռաֆարէն իր կարգին ըսաւ, որ պատե...

Ռուսիա որդեգրեց աւելի խիստ կեցուածք մը՝ յայտարարելով, որ ղէմ պիտի կանգնի զին...

ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԻ ՄԵՋ ԿԸ ԶՈՒՐՇԱՅԻՆ ՓՈՒՆԿԵԱՆԿ

Պուշ Զեյտեց, որ Ապա- ճովութեան Խորհուրդին ընդառնաբար չէ...

Միւս կողմէ, Իրաքի փոխ վարչապետ Թարք իր կարգին ըսաւ, որ պատե...

ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԻ ՄԵՋ ԿԸ ԶՈՒՐՇԱՅԻՆ ՓՈՒՆԿԵԱՆԿ

Սպիտակ Տան պետը ըսաւ նաեւ, որ ամբողջ աշխարհի երկիրներուն առիթ տրուած է հիմա ոտ...

Պուշ քննադատեց նաեւ եւրոպացիները, որոնք եւ մերժեց Իրաքի ղէմ զին...

ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԻ ՄԵՋ ԿԸ ԶՈՒՐՇԱՅԻՆ ՓՈՒՆԿԵԱՆԿ

Պուշ Զեյտեց, որ Ապա- ճովութեան Խորհուրդին ընդառնաբար չէ...

Միւս կողմէ, Իրաքի փոխ վարչապետ Թարք իր կարգին ըսաւ, որ պատե...

ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԻ ՄԵՋ ԿԸ ԶՈՒՐՇԱՅԻՆ ՓՈՒՆԿԵԱՆԿ

NOAH'S ARK ART GALLERY Կը ներկայացնէ ԳԵՂԱՆՎԱՐԻՉ ԶՈՎՍԷՓ ՓԱՊՊԱՐԵԱՆԸ

ՖՐԱՆՍԱ, ՈՒՄԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ ԵՎ ԶՐԱՍՏԱՆ ԿԸ ՄԵՐԾԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

SARKIS & HAGOP LOUSSARARIAN ՎՃԱՐՄԱՆ ԴԻՄՈՒԹԻՆՆԵՐ 3 ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ՏՈՎՈՍԻ 3ԱՆՉՆՈՒՄ 8 ԱՄՄՄԵՆ